The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by
the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրամիության կողմից

BRITISH COUNCIL

ICHD

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ

International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

Ոսկե միջինի փնտրտուքներում. անհրաժե՞շտ է արդյոք Հայաստանին միգրացիայի վերաբերյալ հայեցակարգ

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Ո՞րն է հայկական միգրացիայի առանցքը

Երբ մարդիկ բազմացան, քարայրերը նեղացան… ու սկսվեց միգրացիան. մարդը փորձեց գտնել իր կենսակերպը լավագույնս ապահովելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններով հարուստ միջավայր: Հետո մարդն սկսեց տրոհվել իր տեսակի մեջ ու առաջ եկան տոհմեր, ցեղեր, համայնքներ, քաղաքներ, իշխանություններ ու պետություններ ու դրանք միմյանցից անջատող բաժանարար գծեր, իսկ հետո էլ պետական սահմաններ: Սահմանահատումը դարձավ մարդկային տեսակների համակեցության փորձաքար: Ու կենսական միջավայրի փնտրտուքում մարդը հասավ 21-րդ դար, ուր այդ փնտրտուքն անվանվեց «միգրացիա» ու տեսակներն իրենց պետություններում սկսեցին մշակել կանոնների մի նոր խումբ՝ կառավարելու այդ երևույթը. առավելագույնի հասցնելու միգրացիա երևույթի ընձեռած դրական հետևանքները և հակառակը՝ նվազագույն մակարդակի վրա պահելու դրա բացասական ադրադարձերը, և այդպիսով պաշտպանելու իրենց տեսակները:

Հիմա հայ տեսակն ինչպե՞ս է կառավարելու երևույթն ու «պաշտպանելու» իրեն: Միգրացիան ի՞նչ առանձնահատուկ համուհոտ ունի այս տեսակի համար: 12 միլիոնանոց տեսակի համար դա լուրջ խնդիր է, եթե այդ տեսակի միայն երեք միլիոնն է իր երկրում ապրում և դեռ զգալի մասն էլ ակնկալում է դուրս գալ այդտեղից… Ակնհայտորեն միգրացիոն քաղաքականության առանցքն այստեղ կապվելու է արտագաղթի հետ, և եթե իսկապես կանոններ են պետք, դրանք պետք են լինելու այս երևույթի կարգավորման կամ ավելի ճիշտ՝ կանխման կամ հնարավոր բացասական հետևանքները նվազեցնելու համար:

Ինչպե՞ս մշակել կանոններ կյանքի, ոչ թղթի համար

Կանոնների համապարփակ, ամփոփ փաստաթուղթ մինչև այժմ համարվել է հայեցակարգը, որտեղ հստակորեն սահմանված են առաջնություններ, խնդիրներ, նպատակներ և այդ ամենին հասնելու որոշակի գործողություններ: Արդյո՞ք Հայաստան պետությունը կարիք ունի նման փաստաթղթի: Պատասխանը պետք է բխի կենսական անհրաժեշտությունից և հետևողական և հաստատակամ քաղաքական կամքի առկայությունից: Հակառակ դեպքում կծնվի ժողովրդավարական նկրտումներով հարուստ, հավակնոտ բայց անիրատեսական փաստաթուղթ, որը կարելի է հպարտորեն ներկայացնել գիտական համաժողովներում, սակայն որը համաժողովից համաժողով կշարունակի փոշոտվել այս կամ այն նախարարության գրապահոցում: Սակայն հուսահատվել պետք չի. կա՛ն հստակ քայլեր, որոնք թույլ կտան խուսափել նման վախճանից: Ահա ամենակարևորները.

1. Հայեցակարգ մշակելուց առաջ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել դաշտը, «լուսանկարել» առկա իրականությունը, որը թույլ կտա հասկանալ, թե կա՞ արդյոք կարգավորման անհրաժեշտություն և ինչպիսի՞ խնդիրներ կան այս ոլորտում: Գուցե արդեն իսկ գոյություն ունեցող ազգային մեխանիզմները ինքնակարգավորո՞ւմ են դրանք: Սա թերևս ամենակարևոր քայլն է, որի նախաձեռնողն ու պահանջատերը պիտի լինի պետությունն ինքը, որպեսզի փաստաթուղթն իրական գործողությունների խթան դառնա:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

2. Այնուհետև խնդիրների ցանկից պետք է հստակորեն առանձնացնել ազգային առաջնահերթությունները՝ դրանք խմբավորելով ժամանակային գործոնի հիման վրա՝ անհապաղ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կարգավորման ենթակա հարցեր:

Եթե վերը թվարկվածն ընդունելի է, ապա գործընթացը կարելի է սկսված համարել: Սակայն այն արդյունավետորեն շարունակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ևս երկու գործոն:

1. Խնդիրների սահմանումը պետք է հավակնոտ լինի, սակայն ԻՐԱՏԵՍԱԿԱՆ: Պետք է ճշգրիտ գնահատել առկա ռեսուրսները և խնդիրների նպատակային իրականացումը տեղավորել հենց այդ շրջանակներում:
2. Վերջապես, անհրաժեշտ է համակարգել բոլոր աշխատանքները և, հաշվի առնելով, որ «միգրացիա» երեևույթը հասարակական կյանքի տարբեր ոլորտների կարգավորման խաչմերուկում է գտնվում, պետք է ամեն գնով խուսափել տարբեր կառույցների կողմից «վերմակը դեպի իրեն քաշելու» գայթակղությունից: Որևէ արդունավետության մասին խոսք կարող է գնալ միայն այն դեպքում, երբ բովանդակության առաջնային կարևորությունը գիտակցվում է գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների կողմից: Հակառակ դեպքում սկսվում է կառուցվածքային խառնաշփոթ, որի լավագույն արդյունքը անշունչ փաստաթղթի մշակումն է:

Ի՞նչ ուղղությամբ է սայլը տեղից շարժվելու

Հայեցակարգի մշակման ընդհանուր հիմնաքարերը տեղադրելուց հետո անհրաժեշտ է որոշել գործընթացի ուղղությունը, որը կարող է բազմազան լինել, սակայն հիմնականում ներառելու է հետևյալ ուղենիշերը.

- *Աշխատանքային խմբի ձևավորում:* Խումբ, որը միակարծիք է լինելու աշխատանքային նպատակի հարցում և բազմակարծիք՝ խնդրին իր մոտեցումներում: Այն պետք է լավագույնս ներկայացնի ոլորտի շահագրգիռ դերակատարներին համապարփակ փաստաթուղթ մշակելու համար:
- *Խնդիրների հստակ սահմանում:* Հնարավորինս պետք է խուսափել ընդհանրություններից ու երկիմաստություններից և չվախենալ մանրամասներից:
- *Գործողությունների ազգային ծրագրի մշակում*: Վերջինս պետք է ներառի պատասխանատվությունների և պատասխանատուների մանրամասն ցանկ:

Հնարավո՞ր է անհրաժեշտ քաղաքական կամք դրսևորել նման արդյունքի հասնելու համար: Եթե այո, արժի մտնել ջուրը: Արժի համախմբել ներքին ռեսուրսներն ու արտաքին աջակցությունը: Եթե ոչ, չարժի վատնել ո՛չ ներքին, ո՛չ արտաքին ռեսուրսները, որքան էլ գայթակղիչ թվա վերջինիս մատչելիությունը:

Համառոտագիրը մշակվել է «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագրի շրջանակներում 2008թ-ի հունիսի 24-ին կայացած կլոր սեղանի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: